

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ

ԿՇԱՐՈՒՆԱԿՎԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացրած երեք որոշումները՝ ընթացիկ տարվա գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույրի և կորնզանի արտադրության զարգացման, գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազդարարական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրերը հաստատելու մասին:

Գյուղատնտեսական աշխատանքների իրականացման գործում հողօգտագործողներին աջակցելու նպատակով՝ շուրջ երեք տարի հաջողությամբ իրականացվում են սերմնաբուծության և սերմնաբուծության, ինչպես նաև դիզելային վառելանյութի և ազդարարական պարարտանյութի մատչելի գներով ձեռքբերման պետական աջակցության ծրագրերը:

Ծրագրերի արդյունավետությունը և շարունակականությունն ապահովելու, ինչպես նաև 2014 թվականի գարնանացանի աշխատանքների իրականացման գործում հողօգտագործողներին աջակցություն ցուցաբերելու նպատակով, որոշվել է՝

• սերմացուների նկատմամբ պահանջարկը բավարարելու մասով՝ արտերկրից ձեռք բերել 1978,7 տոննա գարնանացանի գարու առաջին վերարտադրության, 168,35 տոննա կապույտ առվույրի, 189,96 տոննա կորնզանի և 23,44 տոննա եգիպտացորենի սերմացուներ, իսկ տեղական սերմ արտադրողներից՝ 150 տոննա էլիտային վերարտադրության գարնանացանի գարու սերմացու, որոնց տրամադրումը կատարվելու է 1 կգ-ի համար սահմանված հետևյալ գներով՝ գարի՝ 200 դրամ, առվույր՝ 1500 դրամ, կորնզան՝ 370 դրամ, եգիպտացորեն՝ 350 դրամ /այս գները շուկայականից ցածր են 30-50%- ով/:



Արթուր Գևորգյան

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԱՐԳՅՈՒՆԱԿՎԵՏ ՇԱՆԴԻՊՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անրի Ռենոյին:

Ողջունելով հյուրին՝ նախարարն անդրադարձել է գյուղատնտեսության բնագավառում հայ-ֆրանսիական հարաբերությունների զարգացմանն ու դրանք խորացնելու անհրաժեշտությանը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, դեսպան Ռենոն իրապետական է համարել համագործակցությունն ավելի բարձր հիմքերի վրա դնելու հնարավորությունը: Ֆրանսիայի Նախագահ Ֆ. Օլանդի Հայաստանի Հանրապետություն նախատեսվող այցի շրջանակներում, դեսպանը Ս. Կարապետյանին է փոխանցել Ֆրանսիայի գյուղատնտեսության նախարար Ս. Լե Ֆոլի Ֆրանսիա այցելելու հրավերը: Նա նշել է, որ կայանալիք հանդիպումը հնարավորություն կտա առավել մանրամասն քննարկելու և նախանշելու գյուղատնտեսության բնագավառում հայ-ֆրանսիական համագործակցության ուղղությունները, որոնք կարող են ընդգրկվել Հայաստանի և Ֆրանսիայի հանրապետությունների նախագահների հանդիպման օրակարգում:

Նախարարը շնորհակալություն է հայտնել հրավերի համար և խոստացել, սեղմ ժամանակահատվածում, ներկայացնել առաջարկություն՝ այցի հնարավոր ժամկետների և նախատեսվող հանդիպումների վերաբերյալ:

Դեսպանը հետաքրքրվել է նաև խաղողի և գինու միջազգային կազմակերպությանը (OIV) ՀՀ անդամակցության գործընթացով: Ի պատասխան՝ նախարարը հայտնել է, որ փաստաթուղթը գտնվում է ՀՀ ներպետական ընթացակարգերի փուլում, և անդամակցության հայտը շուտով կներկայացվի կազմակերպության գլխավոր փոխնախագահին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի դեռևս անցյալ տարվա առաջարկին ի պատասխան՝ դեսպան Ռենոն առաջարկել է աշխատել Հայաստանում կազմակերպել սեմինար՝ գյուղատնտեսության զարգացման ֆրանսիական մոդելը՝ ըստ զարգացման փուլերի, ներկայացնելու և, ըստ այդմ, մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

Ս. Կարապետյանը պարտավորվել է հայտնել այդ միջոցառմանը հրավիրել նաև Ֆրանսիայի գյուղատնտեսության նախարարի գլխավորած պատվիրակությանը:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ռումինիայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Սորին Վասիլեին:

Շնորհավորելով նրան պատասխանատու պաշտոնում նշանակվելու կապակցությամբ՝ նախարարն անդրադարձել է Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում առկա զարգացումներին, ներկայացրել գյուղում իրականացվող պետական օժանդակության ծրագրերը: Ոլորտի առաջնահերթությունների շարքում նախարարը հիշատակել է նաև հողերի լիարժեք և արդյունավետ մշակման, գյուղատնտեսական կոոպերացիայի համակարգի ներդրման, սննդամթերքի անվտանգության կարողությունների ուժեղացման, անասնաբուծության և տոհմային գործի բարելավման, սերմնաբուծության զարգացման հարցերը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ դեսպան Վասիլեն պարտավորվել է հայտնել աջակցել Հայաստանի և Ռումինիայի գյուղատնտեսության նախարարությունների միջև կապերի զարգացմանը:

Հանդիպման ավարտին, դեսպանը ՀՀ գյուղատնտեսության նախարարին է փոխանցել Ռումինիայի գյուղատնտեսության և գյուղի զարգացման նախարար Դ. Կոնստանտինի 2014 թվականի ապրիլի 1-4-ը Բուխարեստում կայանալիք ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության /ՊԳԿ/ եվրոպական տարածաշրջանային 29-րդ համաժողովին և ՊԳԿ-ի գյուղատնտեսության եվրոպական հանձնաժողովի 38-րդ նստաշրջանին մասնակցելու հրավերը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը Սյունիքի մարզ կատարած աշխատանքային այցը սկսել է Սիսիանի տարածաշրջանից:

Գորայք համայնքում փոխվարչապետը խորհրդակցություն է անցկացրել Սյունիքի և Վայոց ձորի մարզպետներ Վահե Հակոբյանի ու Էդգար Ղազարյանի, Զերմուկ և Գորայք համայնքների ղեկավարների, ինչպես նաև «Գեոթիմ» ընկերության պատասխանատուների մասնակցությամբ:

Ծղուկ համայնքում փոխվարչապետն այցելել է «Բորիսովկա» կաթի վերամշակման ընկերություն, ծանոթացել արտադրական հզորություններին ու պայմաններին: Ընկերությունը ոչ միայն բարելավել է արտադրական պայմաններն, այլև կառուցել է նոր արտադրամասեր՝ ընդլայնելով արտադրության ծավալները: Ընկերությունը ներկայումս համագործակցում է ավելի քան 100 գյուղացիական տնտեսությունների հետ և վերամշակում տարեկան մոտ 1000 տոննա կաթ: Փոխվարչապետը կարևոր է համարել հեռավոր գյուղերում վերամշակող փոքր ընկերությունների գործունեությունը, քանի որ վերջիններս նպաստում են գյուղացիական տնտեսությունների արտադրած գյուղմթերքի իրացմանը, նաև՝ աշխատատեղերի ստեղծմանը:

Սառնակունք համայնքում փոխվարչապետն այցելել է Գյուղատնտեսական և անասնաբուծական սպասարկման կենտրոն (ԳԱՍԿ), ծանոթացել կենտրոնի աշխատանքներին, մատուցվող ծառայություններին և իրականացվող ծրագրերին, քննարկվել են

2

2

1

ԿՆԱՐՈՒՆԱԿՎԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՉԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

՝ դիզելային վառելանյութի պահանջարկը բավարարելու մասով՝ հանրապետությունն ներկրել 17,641,565.0 լիտր դիզելային վառելանյութ՝ մեկ լիտրը 350 դրամ արժեքով հողագործներին փրամադրելու նպատակով, որը շուկայական գներից ցածր է 30%-ով:

՝ պարարտանյութերի պահանջարկը բավարարելու մասով՝ ձեռք բերել 33821.95 տոննա ազոտական, 2645,2 տոննա ֆոսֆորական և 1618,9 տոննա կալիումական պարարտանյութեր, որոնցից ազոտականինը՝ 1 պարկը 6000 դրամ, որը շուկայականից ցածր է 30% -ով, ֆոսֆորական և կալիումականինը՝ 7000 դրամ, որը շուկայականից ցածր է 50% -ով:

Ձեռքբերման գործընթացների վերաբերյալ, հողագործործողներին 2014 թ. գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի մրցույթն իրականացվել է բանակցային ընթացակարգով:

Մրցույթի հրավեր ստացել է 22 կազմակերպություն, իսկ մրցույթի հայտ ներկայացրել 5 կազմակերպություն, որոնց հետ վարվել են բանակցություններ:

ՀՀ կառավարությունը հաստատել է Սյունիքի, Շիրակի և Լոռու մարզերի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը, որոնք ուղղված են մարզերի համայնքների համաչափ զարգացմանն ու բնակչության կենսապայմանների բարելավմանը:

Կառավարությունն իր որոշմամբ փոխել է Լոռու մարզի Ջիլիզայի գյուղական համայնքի վարչական փարածքում գտնվող հողի մի մասի նշանակությունը, ինչի շնորհիվ, համայնքի բնակչությունը հնարավորություն կունենա գործարկել 50-100 տոննա մրգի պահպանման և 2 տոննա մրգաչորի արտադրության սառնարանային տնտեսություն:

ՀՀ կառավարությունը հավանություն է տվել՝ բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման հայեցակարգին, որի ներդրումը հնարավորություն կտա երկրում իրականացնել բնապահպանական ավելի արդյունավետ քաղաքականություն:

1

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) հետ համագործակցության հնարավորությունները: Դեռևս 2011թ.-ից գործող կենտրոնն առաջարկում է անասնաբուժական փորձեր ծառայություններ, փրամադրում է մասնագիտական խորհրդակցություն: Կենտրոնում, ինչպես տեղի, այնպես էլ արտասահմանյան մասնագետների կողմից, պարբերաբար կազմակերպվում են ուսուցողական դասընթացներ՝ անասնաբույժների, ֆերմերների, վերամշակողների և արտադրողների համար: Կենտրոնը ներկայումս համագործակցում է 18 անասնաբույժի և արհեստական սերմավորող տեխնիկների հետ, որոնք սպասարկում են 40-ից ավելի համայնքներ, փարեկան շուրջ 4,000 փոքր ու միջին ֆերմերային տնտեսություն:

Այնուհետև փոխվարչապետն այցելել է Գորիս, քաղաքապետարանում խորհրդակցություն անցկացրել մարզպետի, համայնքների ղեկավարների հետ: Քննարկվել են համայնքների սեփական եկամուտների 2013թ. կատարողականի, 2014թ. բյուջեների կատարման, համայնքապետարաններում և համայնքային ենթակայության հիմնարկներում աշխատանքների արդյունավետ կազմակերպման, համայնքներում էլեկտրոնային համակարգերի ներդրման և ընթացիկ այլ հարցեր: Համայնքների ղեկավարները տեղեկություններ են ներկայացրել իրականացվող ծրագրերի, առկա խնդիրների մասին:

Կապանում Ա. Փլորյանը՝ մարզպետ Վ. Հակոբյանի, Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ա. Վիրաբյանի ուղեկցությամբ, այցելել է Հայաստանի ազգային արխիվի մարզային մասնաճյուղ, ծանոթացել աշխատանքային պայմաններին: Տեղում քննարկվել են շենքը ջեռուցմամբ ապահովելու հնարավորությունները:

Այնուհետև մարզպետարանում անցկացված խորհրդակցությանը, որին մասնակցել են մարզպետը, քաղաքային համայնքների ղեկավարներ, Տարածքային կառավարման նախարարության և մարզպետարանների պատասխանատուներ, ներկայացվել են 2014թ. ծրագրերն ու անելիքները, ինչպես նաև 2013թ. իրականացված աշխատանքները: Նշվել է, որ մարզային զարգացման ծրագրով՝ 2013թ. համար նախատեսված 177 միջոցառումից իրականացվել է 128-ը, իսկ 49-ն ընթացքի մեջ է: 2013թ. մարզում, ընդհանուր առմամբ, կատարվել է շուրջ 38,5 մլրդ դրամի ներդրում՝ արդյունաբերության, սոցիալական, ենթակառուցվածքների, գյուղատնտեսության, բնապահպանության, քաղաքաշինության ոլորտներում:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել է նաև համայնքներում էլեկտրոնային համակարգերի ներդրման աշխատանքների ընթացքը: Ներկայումս մարզի 109 համայնքից Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏ) է ներդրված արդեն 52 համայնքում, որից՝ 39-ը նաև կարող են էլեկտրոնային փաստաթղթաշարժ իրականացնել և փոխգործակցել «Mulberry» համակարգի հետ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՈՒՄ



ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Լիբվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասին:

Դրականորեն արտահայտվելով նախկինում հայ մասնագետների կողմից լիբվայական փորձի ուսումնասիրման հնարավորության մասին, հարկապես սննդի անվտանգության բնագավառում, նա նպատա-

կահարմար է համարել հենց այս ուղղությամբ շարունակել համագործակցությունը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ դեսպան Պետրիկասը լավատեսորեն է արտահայտվել հայ-լիբվայական համագործակցության հետագա հեռանկարների մասին՝ պարտաստակա մտություն հայտնելով նպաստել դրանց հետագա ընդլայնմանն ու խորացմանը:

Հանդիպման ավարտին, դեսպանը ՀՀ գյուղատնտեսության նախարարին փոխանցել է Լիբվայի գյուղատնտեսության նախարար Վ. Յուկնայի հրավերը՝ մասնակցելու, 2014թ. ապրիլի 3-5-ը, Կաունասում կայանալիք «Ագրոբալթ-2014» միջազգային գյուղատնտեսական ցուցահանդեսին:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով, Բանակի օրվա առթիվ, հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած արիության և անձնական խիզախության, գորքերի մարտական պատրաստվածության ապահովման գործում ներդրած նշանակալի ավանդի համար ազատամարտիկ Գոռ Ջանիբեկի Գալստյանը պարգևատրվել է Մարտական ծառայության մեդալով:

Արարատի ԳԱՄԿ-ի աշխատակիցները շնորհավորում են Գոռ Գալստյանին՝ ցանկանալով նրան նորանոր հաջողություններ կյանքում:

Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնը միանում է շնորհավորանքներին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀՀ կառավարության որոշման (28.11.2013, N 1329) համաձայն՝ ՀԱԱՀ-ի 2014-2015 ուս. տարվա դիմորդների համար նոր կարգ է սահմանվել:

ՀԱԱՀ-ի 36 մասնագիտություններից միայն 13-ը (տնտեսագիտական, փոխադրումների կազմակերպում, հողային կադաստր և այլն) կհամալրվեն կենտրոնացված համակարգով, իսկ մյուս մասնագիտությունների դեպքում՝ դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար, դիմում-հայտում նախապես կարող են հայտագրել միջնակարգ կրթության արտադրի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ փարեկան գնահատականը:

Նույն մասնագիտությունների վճարովի ուսուցման համակարգ դիմորդները կարող է ընդունվել առանց միասնական քննությունների հանձնելու՝ որպես մրցութային առարկաների գնահատականներ հայտագրելով արեստի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի նշված առարկաների քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ փարեկան գնահատականը:

Մրցութային առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

ԱՍՈՒՆՍ

ՇԵՆԱԿԱՐԱՅԻՆ ՃՅՈՒՂ

«Պիկուբ» ՍՊ ընկերությունը հանրապետություն է ներկրել աֆրիկյան 100 ջայլամ: Ընկերությունը մի քանի մարզերում փրածքներ ունի, որտեղ զբաղվում է ջայլամաբուծությամբ: Դրանով են զբաղվում նաև մի քանի գյուղացիական տնտեսություններ:

Ասուլիսի ժամանակ ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուժության և անասնաբուծության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը

նշել է, որ Հայաստանում ներկայումս կա մոտ 1000 ջայլամ: Հիմնականում դրանք աֆրիկյան ջայլամներ են, որոնք ներկրվում են Իրանի Իսլամական Հանրապետությունից:


Ա. Հովհաննիսյանը նշեց, որ հայաստանյան շուկայում իրացվում է ջայլամի ձուն ու միսը: Ընկերությունը նաև ջայլամի կաշվից կոշիկների փորձնական խմբաքանակ է պատրաստել և լավ արդյունքների դեպքում կփորձի նաև ջայլամի կաշվից այլ ապրանքատեսակներ արտադրել:

Մեկ ջայլամը փարեկան փալիս է 60-80 ձու, ունի 100-150 կգ քաշ:

Ջայլամի ճուրղ արժի մոտ 100 հազար դրամ, իսկ 1 ջայլամը՝ մոտ 1000 ամերիկյան դոլար: Վարչության պետը կարևորեց, որ ջայլամներն օրական ուտում են մոտ 2.5 կգ խմորած, և յոթ կգ բուսական կերեր: Թեև ջայլամները բնակվում են փառք երկրներում, սակայն Հայաստանում անգամ ձմռանը, այս խոշոր, ջերմությանը սովոր թեչուններն օրական կարող են մեկ-երկու ժամ գտնվել դրոսում:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇԿՈՒՄ



ՀՀ փոխվարչապետ, փարաձայնի կառավարման նախարար Արմեն Պետրոսյանի մոտ օրերս կայացած աշխարհային խորհրդակցության ընթացքում քննարկվել են գյուղատնտեսության ոլորտին վերաբերող հարցեր, խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանը, Արմավիրի և Արարատի մարզպետներ Ա. Ղահրամանյանն ու Ա. Գրիգորյանը, ՀՀ ՉՆ Մեծնախարարի անվտանգության պետական ծառայության պետ Ա. Բախսազույանը, ինչպես նաև գյուղատնտեսության, փարաձայնի կառավարման նախարարությունների, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնյաներ: Արարատի և Արմավիրի մարզերում

քննարկվել էր մշակաբույսերի հիվանդությունների՝ հատկապես կարտոֆիլի և լուլիկի ցեցի, խաղողի ֆիլոքսերայի տարածման և դրանց դեմ պայքարի խնդիրը:

Փոխվարչապետը գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչներին առաջարկել է նշված հիվանդությունների և վնասատուների դեմ մշակել պայքարի միջոցառումներ: Նա կարևորել է բոլոր շահագրգիռ կառույցների՝ Մեծնախարարի անվտանգության պետական ծառայության, ՉՆ-ի, մարզպետարանների և համայնքների կողմից համակարգված աշխատանքների կատարումը: Փոխվարչապետն առանձնահատուկ կարևորել է նաև հիվանդությունների դեմ պայքարի վերաբերյալ իրազեկման լայնածավալ աշխատանքների իրականացումը: Առաջնահերթ է համարվել ֆերմոնային թակարդների ձեռքբերումը, որը հնարավորություն է տալիս արձանագրել վնասատուների դեմ պայքարի ճշգրիտ ժամկետները: Հանդիպման ընթացքում կարևորվել է նաև դրանց տեղակայումը հիվանդությունների առավել մեծ տարածվածություն ունեցող հարվածներում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ գյուղատնտեսության նախարարությունը սարքավորումների ձեռքբերման վերաբերյալ համապատասխան հաշվարկները կներկայացնի կառավարություն: Փոխվարչապետը նշել է, որ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել թունաքիմիկատների և դեղամիջոցների որակին:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐ

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանի մոտ օրերս հրավիրված խորհրդակցությանը քննարկվել են մարզի փարաձայն 50 նոր հակակարկոպային կայանների տեղադրման համար անհրաժեշտ հողահարկացումների իրականացումն ու դրանց կառավարմանը վերաբերող հարցեր:



Խորհրդակցությանը մասնակցել են արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետը, մարզպետարանի աշխատակազմի պատասխանատու պաշտոնյաներ, համայնքապետեր և ոլորտի պատասխանատուներ:

Մարզպետը նշել է, որ հակակարկոպային նոր կայանների ձեռքբերման և գործողների նորոգման նպատակով, կառավարության 2013 թվականի հունիս 6-ի համապատասխան որոշմամբ, 350 մլն. դրամ էր հատկացվել, որից՝ 50 մլն դրամն ուղղվել է արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում գտնվող մարզային կառավարման կենտրոնների արդիականացմանը, իսկ մնացածը՝ նոր կայանների ձեռք բերմանը: Ա. Ղահրամանյանի խոսքով՝ տեղադրվող 50 նոր կայանները կլրացնեն Արմավիրի մարզի առաջին պաշտպանական գոտու թույլ օղակները՝ ստեղծելով երկրորդ պաշտպանական գոտի՝ մարզում նվազագույնի հասցնելով կարկառիկության վրանգը:

Մարզպետը հայտնել է, որ այսուհետ մարզում գտնվող բոլոր հակակարկոպային կայանները կառավարվելու են միասնական կայանից և կարող են միայն համաձայնեցված համազարկեր: Այլ կազմակերպությունների կողմից տեղադրված կայանները ևս համապատասխանեցվելու են հանրապետությունում գործող և կիրառվող մթնոլորտային միասնական համակարգին՝ «Մթնոլորտային երևույթների վրա ազդիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի աշխատանքային սկզբունքներին համապատասխան:

Համայնքապետերը պատրաստակամություն են հայտնել սեղմ ժամկետներում իրականացնելու կայանների տեղադրման համար նախատեսվող հողահարկացումները և հոգալու դրանց շահագործման ծախսերը:

ՊՐՈԴԷԲՍՊՈ - 2014

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՆԻՆ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍՈՒՄ

Հայաստանի գինեգործության ոլորտի զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների շրջանակներում օրերս հայկական վեց գինեգործական ընկերություններ (ս.թ. փետրվարի 10-14-ը), մասնակցել են Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում «Պրոդեբսպո - 2014» ամենամյա սննդի, խմիչքների և դրանց արտադրության հունցի 21-րդ միջազգային ցուցահանդեսին: «Մեմֆիս Զընսալթինգ», «Մանչո Գրուպ», «Մեծ Սյունիք», «Մարան», «Հին Արենի» և «Անուշ-1» ընկերությունները հանդես են եկել միասնական հայկական փառավարում՝ «Հայաստանի գինիներ» խորագրի ներքո և ներկայացրել են «Արմավիր Վինյարդս», «Աստաֆյան», «Մաթևոսյան Վայն», «Մարան», «Հին Արենի», «Դոմեն Ավետիսյան» ապրանքանիշերը:



Վերոնիյալ ցուցահանդեսին հայկական ընկերությունների մասնակցության կազմակերպչական և համաֆինանսավորման աշխատանքներն իրականացրել են «Զարգացման հայկական գործակալությունը» և «Արդյունաբերական զարգացման հիմնադրամը»:

«Պրոդեբսպո»-ն համարվում է Ռուսաստանի Դաշնության և Արևելյան Եվրոպայի խոշորագույն ցուցահանդեսը, որը հնարավորություն է տալիս նոր գործարար կապերի հաստատման, ոլորտի նորություններին և զարգացման միտումներին ծանոթանալու համար: «Պրոդեբսպո-2014»-ն ունի 2300 մասնակից՝ 63 երկրներից և 35 ազգային փառավար:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ՝ ԲԵՐԴԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերջերս Տավուշի մարզի Բերդ քաղաքում տեղի ունեցավ ամբողջությամբ հիմնանորոգված թիվ 2 մուտք-մանկապարտեզի բացման հանդիսավոր արարողությունը: Դեռևս 1961 թվականից գործող մանկապարտեզը հիմնանորոգման խիստ կարիք ուներ, որն էլ օրերս իրականություն է դարձել: Մանկապարտեզը հագեցված է անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով: Այսօր մանկապարտեզում գործում է ութ խումբ՝ 180 երեխայով: Փոքրիկների հետ աշխատում են մանկապարտեզի ավելի քան 30 աշխատակիցներ: Ստեղծված են բոլոր պայմանները՝ երեխաների առօրյան ու հանգիստի առավել հեղուկացրելու և բովանդակալից կազմակերպելու համար: Մանկապարտեզի վերաբացման առիթով, մանկապարտեզի սանիտար, աշխատակիցներին ու ծնողներին շնորհավորել է մարզպետ Ա. Ղուլարյանը՝ մաղթելով նրանց անհոգ ու երջանիկ մանկություն: Շնորհավորանքի խոսք է հղել նաև Բերդի քաղաքապետ Զ. Մանուչարյանը: Իսկ փոքրիկները ներկաներին ողջունել են իրենց աշխույժ երգ ու պարով, տոնական տրամադրությամբ: Այնուհետև մարզպետն ու հյուրերը շրջել են մանկապարտեզի ներսում, ծանոթացել մանուկների համար ստեղծված հիանալի պայմաններին:



ՆՈՐՈՒՅԹ

ԷՄ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Էֆեկտիվ միկրոօրգանիզմներ (ԷՄ) կոչվող պատրաստուկները, որ արդեն մի քանի տասնամյակ է, ինչ օգնում են «նոր երկրագործության» կայանալուն՝ արագացնելով դեգրադացված հողերի վերաբնակեցումը և բերրիության բարձրացումը՝ միկրոօրգանիզմների ներմուծման միջոցով, այժմ նոր հարկություն են դրսևորում: Դրանցով մշակված մթերքի փաթեթավորման թուղթն ու պլաստիկը, խոհանոցներում կտրատման համար օգտագործվող փախարակները, անգամ մի քանի րոպե էՄ-ի հետ շփումից հետո, մթերքին հաղորդում են ավելի բնական, «անարար» համ ու հոտ, «համեղացնում» անգամ ջուրը: Ընդ որում, ազդեցության համար անմիջական շփումն էլ պարտադիր չէ. ներգործումը տեղի է ունենում, նույնիսկ, 25-30 սմ փարաձայնի վրա, և նշված իրերի ազդեցությունը տարիներ է տևում: Մոսկվայի Տեխնոլոգիական և կառավարման համալսարանի կենսաէկոլոգիայի և ձկնաբուծության ամբիոնում ակադեմիկոս Յու.Գ. Սիմակովի ղեկավարությամբ տարվող հետազոտություններով, բացահայտվել է հրաշք պատրաստուկի ևս մեկ հատկություն. էՄ ազդեցության փակ եղած մթերքն, օգտագործելուց 30-40 րոպե անց, մարդու օրգանիզմում սկսում է լապտ բարելավել արյան որակը, նորմալ վիճակի բերելով վնասված երիթրոցիտները՝ դիսկոցիտները, էրիթրոցիտները, պոլիկոցիտները, ինչը հստակ երևում է գեմոկլանների վրա: Մրանք այս ուղղությամբ կատարվող առաջին լուրջ գիտաբժշկական հետազոտություններն են, որոնց շարունակությունը մի կողմից կընդլայնի հրաշք պատրաստուկի կիրառման շրջանակը, մյուս կողմից՝ կպարզաբանի դրա ազդեցության մեխանիզմները:

ԾՐԱԳԻՐ

Ի ՆՊԱՍ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆԸ

ՕԶՍՖԱՍ-ը 33-ում 1994 թվականից գործող միջազգային բարեգործական կազմակերպություն է և իրականացնում է մարդասիրական ու համայնքների զարգացման ծրագրեր 6 մարզերի շուրջ 165 սահմանամերձ գյուղական համայնքներում: Այն մեկն է այն կազմակերպություններից, որն իր ծրագրերով մեծ ներդրում է ունեցել 33 գյուղատնտեսության զարգացման, գյուղատնտեսության քաղաքականության, ինչպես նաև ներդրումների խթանման գործում: Իր ծրագրերի շրջանակներում, ՕԶՍՖԱՍ-ը, տեղական գործընկերների հետ համատեղ, և աջակցում է կայուն կենսապահովման ստեղծմանը:



ջերմոցային փորձարկումներ կից՝ բացվել է ֆերմերային դպրոց: Վ. Ուզունյանի պարզաբանմամբ, ծրագրում կան նաև խնդիրներ, այն է՝ սակավառեսուրս համայնքներում աղետների, գյուղատնտեսական ռիսկերի նվազեցումը: Այսինքն՝ ծրագրի ամենակարևոր առանձնահատկությունը սոցիալական ձեռնարկության գաղափարն է, քանի որ ձեռնարկության շահագործումից գոյացած շահույթի մի մասն ուղղվելու է համայնքային սոցիալական խնդիրների լուծմանը: Ծրագրի ղեկավարը հավելեց, որ ջերմոցներում ներդրված են նոր տեխնոլոգիաներ՝ կաթիլային ոռոգում, ինֆրակարմիր ջեռուցման համակարգ: Իսկ համայնքում հիմնված ֆերմերային դպրոցը նպատակ ունի զարգացնել փոքր փորձարկումների կարողությունները, համալրել կին ֆերմերների գիտելիքները՝ բանջարային մշակաբույսերի արտադրության, սածիլների և սերմերի արտադրության համար: Կոոպերատիվի անդամների համար անցկացվում են դասընթացներ, ինչպես նաև տրամադրվում է աջակցություն՝ բերքի իրացման հարցում: Վ. Ուզունյանը նշեց, որ 33 գյուղատնտեսության նախարարության Բանջարաբուսության միջազգային կենտրոնի մշակաբույսերի գիտական կենտրոնի հետ համագործակցությամբ՝ ստեղծվել է նաև ջերմոց՝ սածիլների արտադրության համար:

ՕԶՍՖԱՍ-ի հայաստանյան մասնաճյուղի գյուղատնտեսության և սննդի անվտանգության քաղաքականության ծրագրի ղեկավար Վահրամ Ուզունյանը նշեց, որ «կայուն կենսապահովման ծրագրի» նպատակներից մեկն՝ աղքատության կրճատումն է: Այդ սկզբունքով ծրագրի թիրախ են ընտրվել Տավուշի և Վայոց ձորի մարզերի խոցելի և փախստականներով բնակեցված համայնքները: Նշված մարզերի 18 համայնքներում մոտ 3000 փոքր փորձարկում ունեցող ֆերմերներ, 2010 թ. մինչ օրս, ստացել են եկամտի շուրջ 30 տոկոսի ան՝ ընդգրկվելով ՕԶՍՖԱՍ-ի կողմից հիմնադրված գյուղատնտեսական կոոպերատիվներում: Ծրագրի կողմից ներդրվող կոոպերատիվի դասական մոդելը նպաստում է փոքր ֆերմերների եկամուտների ավելացմանն ու, միաժամանակ, գյուղական համայնքների զարգացմանը:

ղափարածքները, ավելացնել բերքի արտադրությունն ու դուրս հանել շուկա:

Փոքր ֆերմերային փորձարկումների մի մասն օգտվում է նաև ագրոբիզնեսի նոր համայնքային ենթակառուցվածքներից՝ թարմ մրգերի և հատապտուղների սառնարանային պահեստներից: Կարելի է ասել, որ ՕԶՍՖԱՍ-ն աջակցում է միաժամանակ խթանում է գյուղական բիզնեսի զարգացմանը՝ հիմնելով մրգի և անտառային հատապտուղների վերամշակող գործարան՝ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղական համայնքների համար:

ՕԶՍՖԱՍ-ի կողմից հիմնադրված կոոպերատիվի անդամ բոլոր ֆերմերների համար մատչելի է «Յոթիզոն» հիմնադրամի կողմից փոքր վարկերի տրամադրումը:

ՕԶՍՖԱՍ-ը համագործակցում է ոչ միայն 33 գյուղատնտեսության նախարարության Բանջարաբուսության միջազգային կենտրոնի, այլև՝ մի շարք արտասահմանյան կառույցների հետ, ինչպիսիք են՝ BSC, ICARE, USAID, UMCOR, CARD, VISTAA, Horizon, Fund, AWAY և այլն: ՕԶՍՖԱՍ-ի նախաձեռնությամբ էր, որ հիմնադրվեց բազմաձև Գյուղատնտեսական դաշինքը՝ համախմբելով 12 միջազգային և տեղական կազմակերպությունների:

Իսկ նախորդ տարվա սեպտեմբերին, 33 գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանը և դաշինքի անդամ կազմակերպությունները ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր՝ ամրագրելով գյուղատնտեսության ոլորտում կառավարության հետ համագործակցությունը:

Լիանա Շահնազարյան

ԿՐԹԱԿԱՆ

ՊԱՏՎԱԿՈՐ ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ

Ներկայումս 33-ում գործում է ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ազգային համակարգ (ranking.amedu.am), ըստ որի, ՀԱԱՀ-ն առաջին տեղում է «Երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի» խմբում:



Ինչպես նշել է 33 կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, համակարգի ներդրման նպատակը՝ ուսումնական հաստատությունների միջև մրցակցության և դրանց հաշվետվողականության բարձրացումն է, բուհական համակարգի շահառուների՝ բուհերի մասին բաց և թափանցիկ տեղեկատվություն ստանալու հնարավորության ընդլայնումը, ինչպես նաև հասարակության իրազեկվածության բարձրացումը՝ կրթության որակի և կրթական գործընթացի արդյունավետության վերաբերյալ (աղբյուր՝ edu.am):

Վարկանիշավորման վրա ազդել են սոցիոլոգիական հարցումները: Դրանք արվել են հիմնականում գործարարների շրջանում: Սոցիոլոգիական հարցումների համար ընտրվել են երեք թիրախային խմբեր՝ ուսանողներ, դասախոս-

ներ և գործարարներ: Հայկական բոլոր համալսարանները բաժանված են 9 խմբի: Հայաստանի ազգային ազդարային համալսարանը, 11 բուհերի հետ, ընդգրկվել է «Երեք կրթական աստիճաններում և միջև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի» 2-րդ խմբում: Տվյալ խմբում բուհի վարկանիշն արտացոլվել է 10 ենթաբաղադրիչների միջոցով, մասնավորապես՝ հաշվի են առնվել ինչպես բուհի ընդհանուր վարկանիշն, այնպես էլ՝ ուսումնառության արդյունքների, գիտահետազոտական աշխատանքի, աշխատաշուկայի, դասավանդման գործընթացի, հասարակության կարողությունների, համալսարանական շինությունների և միջազգային ուղղվածությանը վերաբերող սոցիոլոգիական հարցման արդյունքները:

Գրեթե բոլոր ենթախմբերի ցուցանիշները վկայում են ՀԱԱՀ-ի առաջնային դիրքի մասին, որը շար կարևոր է ինչպես բուհի, այնպես էլ դիմորդների մասնագիտական կարողությունների հարցում:

ՀԱԱՀ-ը համագործակցում է մի շարք եվրոպական, ամերիկյան բուհերի, միջազգային կազմակերպությունների հետ և ընդգրկված է մի շարք միջազգային կրթագիտական փոխանակման ծրագրերում: Ներկայումս համալսարանը մի շարք երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ ունի 45 գործող կրթագիտական պայմանագրեր: Համալսարանը, տարբեր ցանցերի շրջանակներում, որպես անդամ կամ գործընկեր համալսարան, համագործակցում է 300-ից ավելի կազմակերպությունների հետ:

Գործարարների բարձր գնահատականը պայմանավորված է աշխատաշուկայում ՀԱԱՀ-ի շրջանավարտների չափազանց պահանջված լինելով, որը կապված է մեր երկրում ազդեցությունների ոլորտի զարգացման ու առաջընթացի հետ:

Այս և այլ գործոնների համախումբն արտացոլում է ՀԱԱՀ-ի առաջնային դիրքը բուհերի ազգային վարկանիշավորման համակարգում, ինչը՝ որքան հաճելի, նույնքան էլ՝ պարտավորեցնող է:

ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ

ՆՈՐ ՄՈՂԵԼԻ ՄՇԱԿՈՒՄ

Մեկնարկել է Տեղական փորձարկման զարգացման (SSQ) մոդելի մշակման գործընթացը Լոռու մարզի՝ Ախթալա, Շամլուղ, Նեղոց, Այրում և Ճոճկան համայնքների համար: ՏՏՁ մոդելի մշակումն իրականացվում է «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «Հայաստանի երիտասարդ կանանց սոցիալ-գիտակցության կողմից» Եվրամիության ֆինանսավորմամբ:

Դեռևս 2013 թ. մայիսից, «Հայաստանի երիտասարդ կանանց սոցիալ-տնտեսական հզորացում» (ՅԵԿԱ/AYWA) հասարակական կազմակերպության կողմից Լոռու մարզում իրականացվում է «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագիրը: Ծրագրի տևողությունը 2013թ. մայիսից մինչև 2016թ. ապրիլն է:

«Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի նպատակն է՝ խթանել Լոռու մարզի կանանց տնտեսական կարողությունների զարգացմանը՝ այսպիսով նպաստելով կանանց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը:

ՏՏՁ մոդելի մշակման գործընթացը հնարավորություն է տալիս համայնքների համար մշակել սոցիալ-տնտեսական զարգացման նոր մոդելներ: ՏՏՁ մոդելը փաստաթուղթ է, որը սահմանում է տվյալ համայնքի մրցակցային առավելությունները, սոցիալ-տնտեսական զարգացման ուղղություններն ու հնարավորությունները:

«Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում, ՏՏՁ մոդելներ կմշակվեն նաև Ալավերդի, Թումանյան, Վանաձոր, Սպիտակ քաղաքների և նրանց հարակից համայնքների համար:

Լոռու մարզ

ՄԵՄԻՆԱՐ - ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԶԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Անցած 2 փարինների ընթացքում հանրապետությունում և փարածաշրջանում փրկող ունեցան շուրջ մեկ փարսնյակ միջոցառումներ՝ գիտաժողովներ, ազգային և միջազգային աշխարհաբան խմբերում քննարկումներ, այլ միջոցառումներ՝ նվիրված կլիմայի փոփոխություններին և նրա ազդեցության (հատկապես՝ գյուղատնտեսության վրա) մեղմացմանը: Օրերս Երևանում փրկող ունեցավ այդ գործընթացներն ամփոփող սեմինար-խորհրդակցություն՝ «Կլիմայի փոփոխության ռիսկերը և հարմարվողության խնդիրները Հայաստանում» թեմայով: Նպատակները երբեք էին՝ «Կլիմայական ռիսկերի կառավարումը Հայաստանում» ՄԱԶԾ-ի և նրա ՃԿԿԳ (Ճգնառվածների կանխման և վերականգնման գործակալություն) կառույցի իրականացրած փարածաշրջանային ծրագրի հաշվետվության ներկայացում, նույն կազմակերպությունների «Տեղական զարգացման բարելավված պլանավորման միջոցով կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը գյուղական համայնքներում» (1.10.13 - 30.09.15 թթ.) ծրագրի ներկայացում և քննարկում, Կլիմայի փոփոխության ռիսկերի և հարմարվողականության խնդիրների քննարկում:



Բացի նշված կազմակերպություններից, որոնք միջոցառման կազմակերպիչներն էին, մասնակցում էին ՀՀ արտակարգ իրավիճակների, փարածաշրջանային կառավարման, գյուղատնտեսության, բնապահպանության նախարարությունների

ներկայացուցիչներ, մի շարք միջազգային կազմակերպություններ, գիտնականներ, ՀԿ-ներ, համայնքային կազմակերպություններ:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ երկրի կառավարությունը, դեռ 2010 թ. դեկտեմբերին, որոշում ընդունեց ԱՌՆԱԳ (աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլանֆորմ) հիմնադրամ ստեղծելու մասին, որը վերջերս հիմնադրվեց՝ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ: Օրվա նիստերը վարում էր նորաստեղծ կառույցի փոխնախագահ Մովսես Պողոսյանը: Լինելով ոչ կառավարական կազմակերպություն՝ հիմնադրամը պետական, մասնավոր և միջազգային կառույցներից հնարավորություն է ընձեռում մասնակցելու որոշումների ընդունմանը և խորհրդարանի կողմից գործընթացներին: Միևնույն ժամանակ, այն ընձեռում է ամենօրյա օպերատիվ գործունեության, կազմակերպման և վերահսկման, երկարաժամկետ ծրագրերի իրագործման հնարավորություններ, ապահովում է նաև անհրաժեշտ ճկունություն՝ նոր մարտահրավերներին արձագանքելու համար: ԱՌՆԱԳ-ի նպատակն է՝ աջակցել ՀՀ-ում ԱՌՆ բազմոլորտ մեխանիզմների ձևավորմանը, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցման ու դրանց արագ վերականգնմանը:

ԱՌՆԱԳ-ի խնդիրները ներառում են՝ ԱՌՆ ռազմավարության մշակումն ու օրենսդրական դաշտի ձևավորման, բարելավման և մշակման համակարգումը, ԱՌՆԱԳ-ի շահառուների դերերի ու պարտականությունների պարզաբանումը, գործակալության շահերի ներդաշնակեցումը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, գիտելիքի և ուսուցման զարգացումը, հանրային իրազեկման բարձրացումը, վերլուծական հմտությունների ամրապնդումը, այդ թվում՝ մշտադիտարկման համակարգի բարելավման մեթոդաբանության մշակումը, ԱՌՆ ինտեգրում՝ զարգացման քաղաքականությանը, ծրագրին և պլանավորմանը, աղետների նկատմամբ դիմակայուն համայնքների նախապարաստման և պաշտպանության մշակույթի զարգացման նպատակով, համագործակցության միջավայրի խթանումը:

Վ 3

ՆՊԱՏԱԲԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԶԵՌԱՆԿԱՐ


